**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

**N 237**

**<<28>> <<12>> 2020թ.**

(0-255) 6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա.Խաչատրյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ավագանու թիվ 16,17,18,19,20 որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (28.12.2020թ.) Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» Դեկտեմբերի 2020 թվական, 16- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով,Սարամեջ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել համայնքի հաշվեկշռում հաշվառված հիմնական և շրջանառու միջոցների 2020 թվականի տարեկան գույքագրման փաստաթղթերը :

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ՝( ) | ԴԵՄ՝( ) | ՁԵՌՆՊԱՀ՝( ) |
|---|---|---|---|
| 1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ | | | |
| 2.ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ | | | |
| 3.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ | | | |
| 4.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 5.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ.Տ

գ .Սարամեջ (21.12.2020թ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հեռ.0255-6-00-58 Էլ.փոստ saramej.lori@mta.gov.am
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2020 թվականի N 17 –Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, Սարամեջ համայնքի ավագանին

Որոշում է.

1.Հաստատել Սարամեջի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելվածի:

1. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ՝(5 ) | ԴԵՄ՝(0) | ՁԵՌՆՊԱՀ՝(0) |
|---|---|---|---|

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2. ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
4. ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ .Սարամեջ (21.12.2020թ.) Կ.Տ

Հավելված
Լոռու մարզի Սարամեջ
համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 21-ի
թիվ 17-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ **12**

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Ընդամենը ամսական |
|---|---|---|---|---|
| | Քաղաքական և հայեցողական պաշտոններ | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 320000 | 320 000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 195000 | 195 000 |
| | **Ընդամենը** | **2** | **515000** | **515 000** |
| | Համայնքային ծառայության պաշտոններ | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 195000 | 195000 |
| 2 | Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 190000 | 190000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 1 | 190000 | 190000 |
| 4 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 105000 | 210000 |
| 5 | Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 100000 | 100000 |
| 6 | **Ընդամենը** | **6** | **590000** | 885000 |
| | Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ | | | |
| 1 | Հավաքարար | 0.5 | 90000 | 45000 |
| 2 | Վարորդ | 0.5 | 96000 | 48000 |
| 3 | փականագործ | 1 | 90000 | 90000 |
| 4 | Տեխնիկական աշխատող | 1 | 90000 | 90000 |
| | | | | |
| | **Ընդամենը** | **3** | **366000** | **273000** |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **11** | **1 471 000** | **1 673 000** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
էլ հասցե saramej.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» դեկտեմբերի 2020 թ. N 18 -Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով

Սարամեջ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարամեջ համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ԿՈՂՄ՝ (5 ) ԴԵՄ՝ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

1. ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2. ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
4. ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ ( 21.12.2020թ.) Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 18 -Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

1) Հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար

15000 ( տասնհինգ հազար ) դրամ:

2) սույն կետի «1-ին» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 (երեսուն հազար) դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) դրամ,

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 (հարյուր հազար) դրամ:

3) Ոչ հիմնական օբյեկտների համար

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 (երեք հազար ) դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 (հինգ հազար) դրամ:

1. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպարունակող շենքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 3000 (երեք հազար) դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերանորոգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1-ին» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն որոշման իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 ( **հինգ հազար** ) **դրամ**:

3. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանվում է

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1500(**հազար հինգ հարյուր դրամ**),

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի վաճառքի կազմակերպման դեպքում 3000 (**երեք հազար դրամ**),

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4000(**չորս հազար դրամ**),

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 (**տաս հազար դրամ**),

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 27000(**քսանյոթ հազար դրամ**),

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 29000(**քսանինը հազար դրամ**),

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2000(**երեք հազար դրամ**)

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 3000 (**երեք հազար դրամ**)

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 4000 (**չորս հազար դրամ**)

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 (**տաս հազար դրամ**)

ե/ 201-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի վաճառքի կազմակերպման դեպքում 30000(**երեսուն հազար դրամ**)

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 40000 (**քառասուն հազար դրամ**)

4. Համայնքի տարածքում

1) բացօթյա վաճառք կազմակերպելու համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 (երեք հարյուր հիսուն ) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար,

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200000 (երկու հարյուր հազար) դրամ,

3) Խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000(երեսուն հազար դրամ)

5. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է `

1) Հիմնական շինությունների ներսում

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 3000(երեք հազար դրամ)

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 5000 (հինգ հազար դրամ)

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 7000(յոթ հազար դրամ)

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 10000 (տաս հազար դրամ)

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 30000(երեսուն հազար դրամ)

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 50000 (հիսուն հազար դրամ)

3) Ոչ հիմնական շինությունների ներսում`

ա/ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 1000 (մեկ հազար դրամ)

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 2000 (երկու հազար դրամ)

գ/ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 4000(չորս հազար դրամ)

դ/ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 8000 (ութ հազար դրամ)

ե/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15000 (տասնհինգ հազար դրամ)

զ/ 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 25000 (քսանհինգ հազար դրամ)

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճալիքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար 25000 (քսանհինգ հազար ) դրամ,
2) հանրային սննդի և զվարճալիքների օբյեկտների համար 50000 (հիսուն հազար )դրամ,
3) բաղնիքների (սաունաների) համար 200000 (երկու հարյուր հազար ) դրամ,
4) խաղատների կազմակերպման համար 500000 (հինգ հարյուր հազար )դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար 250000 (երկու հարյուր հիսուն հազար )դրամ,
6) վիճակախաղերի կազմակերպման համար 100000 (մեկ հարյուր հազար )դրամ:

7. Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար ՝ տեղական

տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 (զրո) դրամ:

8. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է 50000 (հիսուն հազար) դրամ:

10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2000 (երկու հազար) դրամ,
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,
3) այլ արտաքին գովազդի համար 1000 (մեկ հազար) դրամ,
4) համայնքի տարածքում տեղադրված դատարկ գովազդային վահանակների համար 250 (երկու հարյուր հիսուն) դրամ մեկ քառակուսի մետրի դիմաց:
5) կազմակերպության կողմից իր գովազդը տեղաբաշխելու և տարածելու համար գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց յուրաքանչյուր ամսվա համար սահմանվում է տեղական տուրք 100 (մեկ հարյուր) դրամ
6) սոցիալական գովազդի համար 0 (զրո) դրամ

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և քաղվածքների կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 (երկու հազար) դրամ:
12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 (մեկ հազար) դրամ
13. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 (հիսուն հազար) դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

**1.** Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 5000 (հինգ հազար) դրամ փոխհատուցման վճար.
**2.** Համայնքի սեփականության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 2000 (երկու հազար) դրամ փոխհատուցման վճար.
**3.** Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց 1000 (մեկ հազար ) դրամ, փոխհատուցման վճար .

4. Համայնքի սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափերը՝

1) Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 **(հինգ հարյուր ) դրամ**

2) Ծննդօգնություն

թեթև միջամտություն՝ 1000 ( **մեկ հազար ) դրամ**

ծանր միջամտության՝ 5000 **(հինգ հազար) դրամ**

3) Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում պետական ծրագրում ընգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)

մանր կենդանի՝100 ( **մեկ հարյուր** )դրամ

խոշոր կենդանի՝ 200 (**երկու հարյուր** ) **դրամ**

4) Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 500 (**հինգ հարյուր** )**դրամ**

5) Ախտահանություն՝ 1 քառ. մետր 200 ( **երկու հարյուր**) **դրամ**

6) Միջատազերծում (դեզինսեկցիա) 1 քառ. մետր 100 ( **մեկ հարյուր**) **դրամ**

7) Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1 քառ. մետր 200 (**երկու հարյուր** ) **դրամ**

8) Արհեստական սերմնավորում՝ 5000 ( **հինգ հազար** ) **դրամ**

9) Կենդանու հերձում.

մանր կենդանի՝ 1000 ( **մեկ հազար ) դրամ**

խոշոր կենդանի՝ 3000 (**երեք հազար ) դրամ**

10) Կենդանու բուժում կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից յուրաքանչյուր այցելությունը 1000 ( **մեկ հազար** )**դրամ**

11) Կենդանիների նախասպանդային զննում կախված կենդանու տեսակից

մանր կենդանի՝1000 ( **մեկ հազար** )**դրամ**

խոշոր կենդանի՝ 2000( **երկու հազար) դրամ**

12) Կենդանիների հետսպանդային զննում

մանր կենդանի՝ 1000 (**մեկ հազար** ) **դրամ**

խոշոր կենդանի՝ 2000 (**երկու հազար**) **դրամ**:

5. Աղբահանության վճարի դրույքաչափը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հացեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 50 (**հիսուն** ) **դրամ.**

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 ( **տասը** ) **դրամ.**

2) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 ( հիսուն) դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 (հինգ )դրամ.

4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3 (երեք) դրամ:

5) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1000 (**մեկ հազար**) **դրամ** :

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000( **երեք հազար** ) **դրամ** :

6. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 ( մեկ հազար ) դրամ փոխհատուցման վճար:

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ.Սարամեջ (21.12.2020թ.) Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2020 թվականի N 19-Ն

## ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, « ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով , Սարամեջ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել Սարամեջ համայնքի 2020 թվականի բյուջեն:

| | |
|---|---|
| Ընդամենը եկամուտներ | – 51016.3 դրամ |
| Որից՝ վարչական մաս | _ 51016.3 դրամ |
| ֆոնդային մաս | _ 10300.0 դրամ |
| Ընդամենը ծախսեր | _ 51016.3 դրամ |
| Որից՝ վարչական մաս | _ 51016.3 դրամ |
| Ֆոնդային մաս | _ 10300.0 դրամ |

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ԿՈՂՄ՝ (5 ) ԴԵՄ՝ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2.ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
4.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
5.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ.Տ

գ .Սարամեջ (21.12.2020թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«21» դեկտեմբերի 2020 թվական 20- Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարամեջ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարամեջ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | ԿՈՂՄ՝ ( ) | ԴԵՄ՝ ( ) | ՁԵՌՆՊԱՀ՝ ( ) |
|---|---|---|---|
| 1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ | | | |
| 2.ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ | | | |
| 3.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ | | | |
| 4.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 5.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ .Սարամեջ (21.12.2020 թ.) Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 20-Ա որոշման

\

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Աղասի Հովհաննիսյան Վարշիկի – 40000 / քառասուն հազար դրամ/ (սոց. օգնություն)
2. Գոհար Խաչատրյան Մանվելի – 40000 / քառասուն հազար դրամ/ (սոց. օգնություն)
3. Անդրանիկ Զաքարյան Հովհաննեսի – 40000 / քառասուն հազար դրամ/ (սոց. օգնություն)
4. Արմեն Սարգսյան Մամբրեի – 40000 / քառասուն հազար դրամ/ (սոց. օգնություն)
5. Ալեքսան Ավագյան Ստեփանի – 40000 / քառասուն հազար դրամ/ (սոց. օգնություն)
6. Աղաբեկ Խաչատրյան Տոնիկի – 40000 / քառասուն հազար դրամ/ (սոց. օգնություն)

ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ